

Հ Ր Ա Մ Ա Ն N 502-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«09» ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության հայտարարելու մասին» 298-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մայիսի 3-ի N 63 որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը և Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի մարտի 24-ի N 269/1-Ա հրամանը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Պրոբացիայի ծառայության Շիրակի մարզային մարմնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 12-3-22.10-Մ3-6) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված արտաքին մրցույթի թեստավորման փուլն անցկացնել 2020 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 11:00-ին, իսկ հարցազրույցի փուլը՝ 2020 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 11:00-ին:

6/9/2020

X 

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ